



ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՄԵՎԱՆԻ

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ

ԱՍՏԻՃԱՆ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի անդամ՝ ԺԹ.00.05, „Տարիքային և մանկավարժական հոգեբանություն և ԺԹ.00.01 “Հոգեբանության տեսություն և պատմություն” թվանիշերով

ԿՈՉՈՒՄ՝ պրոֆեսոր

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ՝

2012թ. Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյա հոբելյանը

խորհրդանշող մեդալ

2012թ. արժանացել է «Ռուսաստանի լավագույն հոգեբան» պատվո նշանին և մրցանակին:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝

1969 թվականին ավարտել է Խ.Աբովյանի անվան Հայկական Պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետը:

1970-1971 թվականներին ծառայել է խորհրդային բանակում: Ունի փոխգնդապետի զինվորական կոչում:

1973-1978 թվականներին աշխատել է հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայում:

1978 թվականին ընդունվել է Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան Պետական Համալսարանի հոգեբանության ֆակուլտետի ասպիրանտուրան՝ «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն» մասնագիտությամբ (գիտական ղեկավար՝ ՄԳԱ-ի իսկական անդամ Ն.Ֆ.Տալիզինա):

1981 թվականին նույն համալսարանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Մոդելավորումը որպես սովորելու գործունեության բաղադրամաս» թեմայով:

1999 թվականին Վրաստանի գիտությունների ակադեմիայի Դ. Ուզնաձեի անվան հոգեբանության ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Նշանակափոխության գործունեության հոգեբանափորձարարական ուսումնասիրություններն ուսումնական նյութի ընկալման և հասկացման պայմաններում» թեմայով: Նրան շնորհվել է հոգեբանության գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Պրոֆեսորի գիտական կոչում ստացել է 2008 թվականին:

2012 թվականին արժանացել է «Ռուսաստանի լավագույն հոգեբան» պատվո նշանին և մրցանակին:

2013 թվականին ընտրվել է Հոգեբանական գիտությունների միջազգային ակադեմիայի թղթ.-անդամ, 2007-2012 թվականներին ռուսերենով, ուկրաիներենով և այլ լեզուներով կատարած աշխատանքների մրցույթի արդյունքում:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՍԵՎԱՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ`

1982-87 թվականներին աշխատել է Գյումրիի մանկավարժական ինստիտուտում, սկզբում որպես ավագ դասախոս, այնուհետև՝ որպես մանկավարժության և տարրական կրթության ամբիոնի վարիչ: 1985 թվականին Կիևում մասնակցել է հատուկ դասընթացների և ստացել «Գործարար խաղերի մասնագետի» վկայական: 1987 թվականին ստացել է դոցենտի գիտական կոչում:

1990 թվականին մասնակցել է Ռիգայում կազմակերպված Նեյրոլեզվաբանական ծրագրավորման դասընթացներին և ստացել հատուկ վկայական:

1988-1998 թվականներին ղեկավարել է Գյումրիի մանկավարժական ինստիտուտի հոգեբանության ամբիոնի աշխատանքները, 1993-1994 թվականներին Սպարապետ Վ. Սարգսյանի ցուցումով մասնակցել է ՀՀ Պաշտպանության նախարարության անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչության աշխատանքներին: Ունի փակ(գաղտնի) թեմաներին վերաբերող ուսումնասիրություններ:

1999 թվականին Վրաստանի գիտությունների ակադեմիայի Գ. Ուզնաձեի անվան հոգեբանության ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Նշանակասիմվոլային գործունեության հոգեբանափորձարարական ուսումնասիրություններն ուսումնական նյութի ընկալման և հասկացման պայմաններում» թեմայով: Նրան շնորհվել է հոգեբանության գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

2004 թվականին նշանակվել է Խ Արովյանի անվան ՀՊՄՀ-ի հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայի վարիչ: Այդ պաշտոնում աշխատել է մինչև 2009 թվականի վերջը: Առ այսօր, համատեղության կարգով դասավանդում է ինչպես մանկավարժական համալսարանում, այնպես էլ Գյումրիի մանկավարժական ինստիտուտում: 2004 թվականին նշանակվել է ՀՀ ԲՈՀ-ի 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար: Նա հոգեբանության գծով հրատարակել է 180-ից ավելի աշխատանքներ:

Նրա գիտական հետաքրքրությունները լայն են՝ սկսած տեքստի և բանավոր հաղորդակցման ընկալման ու հասկացման հիմնախնդրից, անձի համակողմանի ուսումնասիրություններից, հոգեախտորոշման և հոգեշտկման խնդիրներից, ինքնաիրացման և հոգեկարգավորման գործընթացների ուսումնասիրումից մինչև հոգեբանական ծառայությունների կազմակերպում: Այդ բոլորի հիմքում ընկած է նշանա-սիմվոլային գործունեությունը և հոգեսեմանտիկան: Այժմ նա ակտիվորեն աշխատում է բուհական համակարգում հոգեբանական տարաբնույթ ծառայությաններ(ծրագրեր) իրականացնելու ուղղությամբ: Առաջին անգամ ՀՀ կրթական համակարգում ներդրել է հոգեբանական ծառայության մոդելը (մանրամասն տես՝ «Պետք է հոգեբանական ծառայություններ կրթական համակարգին», «Կրթություն» թերթի 16.09.2006թ. համար):

2008 թվականին կազմակերպել և անցկացրել է միջազգային գիտաժողով «Կրթության բարեփոխումների հոգեբանական հիմնահարցեր» խորագրով, որին մասնակցել են անվանի հոգեբաններ և մանկավարժներ ԱՊՀ-ի 42 քաղաքներից: 2010 թվականի սկզբներին նշանակվել է նորաստեղծ՝ «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն» ամբիոնի վարիչի պաշտոնակատար:

2012 թվականի հոկտեմբերին փակ գաղտնի քվեարկությամբ ընտրվել է Հոգեբանական գիտությունների միջազգային ակադեմիայի թղթակից-անդամ: Նրա 2007-2012 թվականների ռուսերենով, ուկրաիներենով և այլ լեզուներով տպագրած 57 աշխատանքները բարձր են գնահատվել ակադեմիայի իսկական անդամների կողմից:

2013 թվականի հուլիսի 1-5 –ը ՀՊՄՀ-ի բազայի վրա նրա ղեկավարած ամբիոնը կազմակերպել է միջազգային գիտաժողով «ԱՆԸՆԴՅԱՏ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ » խորագրով: Այս նախագիծը առաջին անգամ անցացվել է ՀՀ Գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ: Արտասահմանցի և տեղացի մասնակիցները շատ բարձր են գնահատել գիտաժողովի թեմատիկան, կազմակերպման և անցկացման գործընթացները, մշակած և առաջարկած հանձնարարությունները: